



Kingdom of the
Netherlands



ՄԻԱԿ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ, ՈՐԱԿԻ
ԵՎ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ ԿՍԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

2 Ե Կ ՈՒ Յ Ց

Հայաստան, Երևան 2017

**ՄԻԱՎ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ, ՈՐԱԿԻ
ԵՎ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ ԿՍԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

2 Ե Կ ՈՒ Յ Ց

«Սույն զեկույցը հնարավոր է դարձել է իրականացնել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աջակցությամբ Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆոնդերի հաշվին՝ «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար ՔՀԿ-երի աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին և հնարավոր է՝ չհամընկնեն «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Հապավումներ	5
Նախաբան	6
Հանդիպում-քննարկումներին մասնակցության ընտրության չափանիշները	7
Դիտարկումներ և մարտահրավերներ	8
Քննարկվող ծառայությունների ցանկ	8
Մեթոդաբանություն	9
Արդյունքներ և վերլուծություն	11
Ծառայությունների/ապրանքների որակ	13
Ծառայությունների/ապրանքների առաջնահերթություն	16
Եզրակացություն	18

2017թ-ին «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում հայտարարվեց ենթադրամաշնորհային մրցույթ: Ծրագիրն իրականացնում է «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը (ՆՍՄԿ), Կրաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատան ֆոնդերի հաշվին:

«ԶԻԱՅ-ի Կանխարգելման Միավորում» Հասարակական Կազմակերպությունը (ԶԿՄԿ) և «Հայ Չարգացման Ներուժ» առողջապահական, սոցիալական, բնապահպանական Հասարակական Կազմակերպությունը (ՀՉՆԱՍԲՀԿ) կազմեցին կոնսորցիում և ներկայացրեցին «ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների կարիքի, որակի և առաջնահերթությունների գնահատում ԿՍԿ-ների շրջանում» ծրագիրը ենթադրամաշնորհային մրցույթում:

Ըստ «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության և «ԶԻԱՅ-ի Կանխարգելման Միավորում» Հասարակական Կազմակերպության միջև կնքված պայմանագրի՝ ծրագրի ժամկետը սահմանվեց 2017թ. մարտի 1-ից մինչև 2017թ մայիսի 31-ը, իսկ հաշվետվության ժամկետը սահմանվեց հունիսի 12-ը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Բուժհաստատություն – Բժշկական՝ բուժական հաստատություն

ԿՍԿ – Կոմերցիոն սեռական ծառայություն տրամադրող կին

ԿՏ կյուբեր – Կրթական-տեղեկատվական կյուբեր

ՀՁՆԱՍԲՀԿ – «Հայ Չարգացման Ներուժ» առողջապահական, սոցիալական բնապահպանական Հասարակական Կազմակերպություն

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ՁԿՄՀԿ – «ՁԻԱՀ-ի Կանխարգելման Միավորում» Հասարակական Կազմակերպություն

ՁԻԱՀ – Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ

Մարզկենտրոն – Մարզային կենտրոն

ՄԻԱԿ – Մարդու իմունային անբավարարության վիրուս

ՆՍՄՀԿ – «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

Սոցկայք – Սոցիալական կայք

2017թ-ի մարտի 1-ից մեկնարկեց «ՁԻԱՅ-ի Կանխարգելման Միավորում» և «Հայ Չարգացման Ներուժ» ՀԿ-ների կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների կարիքի, որակի և առաջնահերթությունների գնահատում ԿՍԿ-ների շրջանում» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է կատարել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտում մատուցվող ծառայությունների գնահատում, ուսումնասիրել շահառուների կարիքները և մշակել առաջարկներ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման 2018-2021թթ. ազգային ծրագրում ներգրավելու նպատակով: Ծրագրի իրականացման արդյունքների հիման վրա կստեղծվի փաստաթուղթ, որը կարտահայտի ծրագրի շահառուների կարծիքը մատուցվող ծառայությունների վերաբերյալ, կբացահայտի նրանց կարիքները, սպասումները և ակնկալիքները, ինչպես նաև կապահովի շահառուների մասնակցությունը ազգային ծրագրի մշակման գործընթացում, ինչի շնորհիվ ազգային ծրագիրը կլինի առավել նպատակաուղղված և արդյունավետ:

Ծրագրի ինդիրն է կազմակերպել հանդիպում–քննարկումներ 100-150 ԿՍԿ-ների շրջանում ք. Երևանում և ՀՀ մարզերում և կազմել զեկույց իրականացված քննարկումների հիման վրա:

Ծրագիրն իրականացվել է 2 փուլով:

Առաջին փուլում (մարտ ամիս) կատարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ պայմանագրերի կնքում, տարածքների վարձակալություն, բանակցությունների վարում, անհրաժեշտ նյութերի տպագրություն, հուշանվերների պատրաստում, համայնքի մոբիլիզացնողների հետ բանակցություն հանդիպում–քննարկումներին ԿՍԿ-ների մասնակցությունն ապահովելու համար:

Երկրորդ փուլում (ապրիլ և մայիս ամիսներ) իրականացվել են հանդիպում–քննարկումները: «ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների կարիքի, որակի և առաջնահերթությունների գնահատում ԿՍԿ-ների շրջանում» ծրագրի շրջանակում իրականացվել են 10 հանդիպում–քննարկումներ 130 ԿՍԿ-ների մասնակցությամբ: Հանդիպումներն իրականացվել են Երևան քաղաքում, Կոտայք, Լոռի, Շիրակ և Գեղարքունիք մարզերում:

Ստորև ներկայացված է հանդիպումների ժամանակացույցը և մասնակիցների թիվը՝

Ամսաթիվ	Վայր	Քանակ և խումբ
08.04.2017	ք.Երևան	14 ԿՍԿ
15.04.2017	ք.Աբովյան	14 ԿՍԿ
22.04.2017	ք.Երևան	10 ԿՍԿ
28.04.2017	ք.Վանաձոր	12 ԿՍԿ
29.04.2017	ք.Գյումրի	12 ԿՍԿ
06.05.2017	ք.Գյումրի	15 ԿՍԿ
13.05.2017	ք.Երևան	13 ԿՍԿ
20.05.2017	ք.Երևան	10 ԿՍԿ
27.05.2017	ք.Վանաձոր	15 ԿՍԿ
27.05.2017	ք.Գավառ	15 ԿՍԿ

Հանդիպումների և քննարկումների ընթացքում պարբերաբար կատարվել է մշտադիտարկում: Յուրաքանչյուր հանդիպման ներկա է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչը կամ ծրագրի փորձագետը: Հանդիպումների ընթացքում կատարվել են նաև հարցումներ իրավաբանի կողմից՝ ՄԻԱՎ-ի կանխարգելման, ինսամքի և բուժման հետ կապված ծառայությունների հասանելիությանն առնչվող մարդու իրավունքների խախտման դեպքերի փաստագրման նպատակով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

2004 թվականից ՀՀ-ում իրականացվում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագիրը, որն իրականացվում է ՄԻԱՎ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: 2004 թվականից մինչ այսօր «ՁԻԱՀ-ի Կանխարգելման Միավորում» ՀԿ-ն իրականացնում է ազգային ծրագրի մաս կազմող «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում ԿՍԿ-ների շրջանում» ծրագիրը: Ավելի քան 4000 շահառուներ են ներգրավված ծրագրում: Այն իրականացվում է Երևան քաղաքում, ինչպես նաև Լոռի և Շիրակ մարզերում: Նախկինում ծրագիրն իրականացվել է նաև Կոտայք, Գեղարքունիք և Սյունիք մարզերում:

Հանդիպում-քննարկումներին մասնակցելու համար ընտրվել են 18-55 տարեկան առավել ակտիվ շահառուները: Առավել օբյեկտիվ արդյունքներ ստանալու նպատակով կարևոր էր կատարել հետազոտություն տարբեր բնակավայրերում աշխատող, տարբեր տարիքային և սոցիալական խմբերին պատկանող ԿՍԿ-ների շրջանում: Հետազոտության մեջ պետք է ընդգրկվեին ինչպես փողոցում աշխատող ԿՍԿ-ները, այնպես էլ նրանք, ովքեր

առաջարկում են իրենց ծառայությունները սոցկայքերի միջոցով, աշխատում են հյուրանոցներում, մերսման սրահներում և սաունաներում:

Հանդիպում-քննարկումների անցկացման համար ընտրվել են ք. Երևանը, Լոռու, Շիրակի, Աբովյանի և Գեղարքունիքի մարզերը: Ընտրությունը պայմանավորված է եղել նախկինում և ներկայումս իրականացված ծրագրերով: Ընտրվել են այն մարզերը, որտեղ օգտվել են կամ օգտվում են ՄԻԱՎ-ի դեմ հակազդման ազգային ծրագրով տրամադրվող ծառայություններից: Հանդիպումները իրականացվել են մարզկենտրոններում, բայց հանդիպումների մասնակցել են շահառուներ մարզերի տարբեր բնակավայրերից:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ

Հանդիպում քննարկումները անցել են ոչ կոնֆլիկտային և ինտերակտիվ մթնոլորտում: Հիմնականում անցել են բուռն և արդյունավետ քննարկումներով: Վեճեր և սկանդալային իրավիճակներ չեն գրանցվել, սակայն բավականին քանակով շահառուներ չեն մասնակցել հանդիպումներին միմյանց հանդիպելուց խուսափելու համար: Այդ խնդիրներից ելնելով՝ կարծում ենք, որ հետագայում նմանատիպ հետազոտությունների համար նպատակահարմար կլինի ունենալ և կիրառել նաև հետազոտության այլընտրանքային տարբերակներ, օրինակ՝ հարցաթերթիկների միջոցով:

Մարտահրավերներից է եղել շահառուների մասնակցության ապահովումը, քանի որ շահառուների միջև կան անձնական խնդիրներ, ինչը լուծվել է հանդիպումներն ավելի փոքր խմբերով և առանձին անցկացնելով:

Քննարկվող թեմաներից բացի մասնակիցների կողմից բարձրացվել են առկա իրավական, սոցիալական և այլ խնդիրներ:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն՝ քննարկվել են նախաթեստային և հետթեստային խորհրդատվության տրամադրման հասանելիությունը, որակը և առաջնահերթությունը:

ՄԻԱՎ հետազոտություն՝ քննարկվել են առկա հետազոտման մեթոդը, հասանելիությունը, որակը և առաջնահերթությունը, ինչպես նաև ավտերնատիվ այլ թեստեր ու թեստավորման համար նախատեսված վայրեր:

ԿՏ նյութերի և գիտելիքների տրամադրում՝ քննարկվել են բուկլետների առկա տեսակը, հասանելիությունը, որակը և առաջնահերթությունը, տրամադրման մեթոդները,

բովանդակությունը և արդյունավետությունը, ինչպես նաև աութրիչ աշխատողների աշխատանքը:

Պահպանակների տրամադրում՝ քննարկվել են պահպանակի հասանելիությունը, որակը և առաջնահերթությունը, ինչպես նաև ուսումնասիրվել են տրամադրման միջոցները և քանակները:

Սեռավարակների հետազոտություն՝ քննարկվել են սեռավարակների հետազոտության հասանելիությունը, որակը և առաջնահերթությունը, ներկայումս հետազոտվող հիվանդությունների ցանկը:

Սեռավարակների բուժում՝ քննարկվել են սեռավարակների բուժման հասանելիությունը, որակը, առաջնահերթությունը և բուժման մեթոդները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծառայությունների / ապրանքների հասանելիություն

Այս փուլում սեմինարավարները ֆոկուս խմբային քննարկումների միջոցով պարզել են, թե յուրաքանչյուր ծառայություն / ապրանք որքանով է հասանելի ահառուներին: Պատրաստվել է ծառայությունների աղյուսակ, իսկ մասնակիցներին տրամադրվել են գունավոր թղթեր, որոնց վրա յուրաքանչյուր մասնակից իր կարծիքը գրել ու փակցրել է համապատասխան աղյուսակում՝ համապատասխան ծառայության դիմաց: Մասնակիցների պատասխանները դասակարգվել են 4 տարբեր սյունյակների մեջ՝ Լիովին հասանելի է՝ եթե մասնակիցները գտել են, որ տվյալ ծառայությունը ամբողջությամբ հասանելի է իրենց ու չկան խնդիրներ:

Հասանելի է ոչ բոլորին՝ եթե մասնակիցները գտել են, որ տվյալ ծառայությունը ամբողջությամբ հասանելի չէ իրենց կամ որոշ այլ շահառուների:

Հասանելի է մասամբ՝ եթե մասնակիցները գտել են, որ տվյալ ծառայությունը ոչ լիարժեք է հասանելի իրենց և այլ շահառուների:

Հասանելի չէ՝ եթե մասնակիցները գտել են, որ տվյալ ծառայությունն ընդհանրապես հասանելի չէ իրենց և այլ շահառուների:

Ծառայությունների / ապրանքների որակ

Այս փուլում ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ սեմինարավարը հարց է ուղղել, թե յուրաքանչյուր ծառայություն / ապրանք ինչպես է մատուցվում, և ինչպիսին է որակը: Մասնակիցների միջև քննարկումներ և բանավեճեր հիմնական կետերը գրի են առնվել նախապես պատրաստված աղյուսակի մեջ: Մասնակիցների պատասխանները դասակարգվել են 3 տարբեր սյունյակների մեջ՝

Ի՞նչ է պետք շարունակել՝ եթե տվյալ ծառայության / ապրանքի սպասարկման որակը, մատուցման ձևը համապատասխանում է շահառուների պահանջին, տվյալ պատասխանները տեղ են գտել այս սյունյակում:

Ի՞նչ է պետք փոփոխել՝ եթե տվյալ ծառայության / ապրանքի սպասարկման որակը, մատուցման ձևը լիարժեք չեն համապատասխանում շահառուների պահանջին, տվյալ պատասխանները տեղ են գտել այս սյունյակում: Հարկ է նշել, որ շահառուները գտել են, որ տվյալ ծառայությունը կարևոր է, բայց պիտի որոշակիորեն փոփոխվի:

Ի՞նչ է պետք դադարեցնել՝ եթե տվյալ ծառայություն / ապրանքը ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրում դրական արդյունք չի ապահովում շահառուների համար կամ շահառուները գտնում են, որ տվյալ ծառայություն / ապրանքը մատուցվում է սխալ ձևով կամ պիտանի չէ:

Ծառայությունների / ապրանքների առաջնահերթություն

Սեմինարավարը երրորդ փուլում ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ մասնակիցներին տեղեկացրել է վերոնշված ծառայությունների վերաբերյալ հետագա բյուջեի ենթադրյալ կրճատման մասին: Մասնակիցները կատարել են երկու փուլից բաղկացած ընտրություն:

Առաջին փուլում բյուջեի կիսով չափ կրճատվելու դեպքում 6 ծառայություններից ընտրվել են ընդամենը 4 կարևոր ծառայությունները:

Երկրորդ փուլի ընթացքում նախորդ փուլից ընտրված 4 ծառայություններից վերընտրվել են առավել կարևոր 2 ծառայությունները:

Հանդիպում-քննարկումներին մասնակցել է 130 ԿՍԿ, որից 47 ԿՍԿ՝ Երևանիս, 83 ԿՍԿ՝ մարզերից:

**Ծառայությունների / ապրանքների հասանելիություն
ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն**

Երևան

Բոլոր մասնակիցները ստացել են նախաթեստային և հետթեստային խորհրդատվություն բժիշկի կամ աուլթրիչ աշխատողների կողմից

Մարզեր

Մասնակիցներից 26-ը նշել են, որ ծառայությունը լիովին հասանելի է:

Մասնակիցներից 42-ը նշել են, որ այս ծառայությունը մասամբ է հասանելի, մատնանշելով՝

- Բուժհաստատությունների սահմանափակ լինելը,
- Կատարվում է պոլիկլինիկաներում՝ բացահայտման խնդիր,
- Գործում է մարզկենտրոնում միայն՝ տրանսպորտի/տեղափոխման խնդիր:

Մասնակիցներից 15-ը նշել են, որ այս ծառայությունը հասանելի չէ՝

Գեղարքունիք մարզում ծառայություններ չեն մատուցվում

ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտություն

Երևան

Մասնակիցներից 42-ը նշել են, որ ծառայությունը լիովին հասանելի է:

Մասնակիցներից 5-ը նշել են, որ ծառայությունը մասամբ է հասանելի՝

- Բուժհաստատության ժամային և այցելության օրերի սահմանափակումը,
- Հետազոտությունը իրականացվում է բուժհաստատություններում՝ բացահայտման խնդիր:

Մարզեր

Մասնակիցներից 26-ը նշել են, որ ծառայությունը լիովին հասանելի է:

Մասնակիցներից 42-ը նշել են, որ ծառայությունը հասանելի է մասամբ՝

- Հետազոտությունը իրականացվում է պոլիկլինիկայում՝ բացահայտման խնդիր,
- Հետազոտությունը իրականացվում է մարզկենտրոնում միայն՝ աշխատանքային ժամերի և տրանսպորտի/տեղափոխման խնդիր:

Մասնակիցներից 15-ը նշել են, որ ծառայությունը հասանելի չէ՝

- Գեղարքունիք մարզում այս ծառայությունը չի մատուցվում:

ԿՏ նյութերի և գիտելիքների տրամադրում

Երևան

Բոլոր մասնակիցները նշել են, որ ծառայությունը հասանելի է, սակայն աուֆթիչների ծանրաբեռնվածության պատճառով հանդիպումները լինում են ոչ այդքան հաճախ, քան շահառուները կցանկանային: Հարկ է նշել, որ ծրագրի թիրախային խումբն այնպիսին է, որ մեկ աուֆթիչ աշխատողը պետք է աշխատի ամսական 200-250 շահառուի հետ, և այդ պատճառով հանդիպում է յուրաքանչյուրին լավագույն դեպքում ամիսը մեկ անգամ:

Մարզեր

Բոլոր մասնակիցները նշել են, որ ծառայությունը հասանելի է, բայց ոչ բոլորին՝

- Ամբողջ մարզում աշխատում է մեկ աուֆթիչ աշխատող,
- Չկա գրասենյակ, որտեղից իրենք կարող են գալ և ստանալ նյութեր:

Պահպանակների տրամադրում

Երևան

Բոլոր մասնակիցները նշել են, որ այս ծառայությունը լիովին հասանելի է: Պահպանակներ ստանում են և աուֆթիչ աշխատողների կողմից, և ՀԿ-ի գրասենյակում:

Մարզեր

Մասնակիցներից 68-ը նշել են, որ ծառայությունը լիովին հասանելի է:

Մասնակիցներից 15-ը նշել են, որ ծառայությունը հասանելի չէ՝

- Գեղարքունիք մարզում այս ծառայությունը չի մատուցվում:

Սեռավարակների հետազոտություն

Երևան

Մասնակիցներից 42-ը նշել են, որ ծառայությունը հասանելի է լիովին:

Մասնակիցներից 5-ը նշել են, որ ծառայությունը հասանելի է մասամբ՝

- Գաղտնիության վստահության պակաս:

Մարզեր

Մասնակիցներից 26-ը նշել են, որ ծառայությունը լիովին հասանելի է:

Մասնակիցներից 42-ը նշել են, որ ծառայությունը հասանելի է մասամբ՝

- Հետազոտությունը իրականացվում է պոլիկլինիկայում՝ բացահայտման խնդիր,
- Հետազոտությունը իրականացվում է մարզկենտրոնում միայն՝ աշխատանքային ժամերի և տրանսպորտի/տեղափոխման խնդիր:

Մասնակիցներից 15-ը նշել են, որ ծառայությունը հասանելի չէ՝

- Գեղարքունիք մարզում այս ծառայությունը չի մատուցվում:

Սեռավարակների բուժում

Երևան

Մասնակիցներից 42-ը նշել են, որ ծառայությունը հասանելի է լիովին:

Մասնակիցներից 5-ը նշել են, որ ծառայությունը հասանելի է մասամբ՝

- Գաղտնիության վստահության պակաս:

Մարզեր

Մասնակիցներից 26-ը նշել են, որ ծառայությունը լիովին հասանելի է:

Մասնակիցներից 42-ը նշել են, որ ծառայությունը հասանելի է մասամբ՝

- Չետազոտությունը իրականացվում է պոլիկլինիկայում՝ բացահայտման խնդիր,
- Չետազոտությունը իրականացվում է մարզկենտրոնում միայն՝ աշխատանքային ժամերի և տրանսպորտի/տեղափոխման խնդիր:

Մասնակիցներից 15-ը նշել են, որ ծառայությունը հասանելի չէ՝

- Գեղարքունիք մարզում այս ծառայությունը չի մատուցվում:

Ծառայությունների / ապրանքների որակ

ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն

Երևան / Մարզեր

Շարունակել

Բոլոր մասնակիցները գոհ են խորհրդատվության որակից և պետք է դա շարունակել:

Խորհրդատվությունը տրամադրվում է և՛ բժիշկի կողմից, և՛ աուլթիչ աշխատողների:

Մարզեր

Շարունակել

83 մասնակից նշել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության անցկացման որակի և գաղտնիության կարևորությունը և ցանկացել, որպեսզի այն պահպանվի ապագայում:

Փոխել

83 շահառու նշել են, որ պետք է ունենալ ծրագրային գրասենյակներ մարզերում:

Քննարկումները բացահայտեցին, որ մարզերում բնակվող շահառուների համար բավականին արդիական է ծրագրային գրասենյակների բացակայությունը: Դա խոչընդոտ է հանդիսանում ոչ միայն հարմարավետ պայմաններում ՄԻԱՎ-ի վերաբերյալ

տեղեկատվության ստանալուն, այլև ուսուցանող և իրազեկող միջոցառումների կազմակերպման համար:

27 մասնակից նշեցին, որ պետք է ավելացնել ՄԻԱՎ-ի նկատմամբ տրամադրվող խորհրդատվության աշխարհագրական ծածկույթը: Նրանց կարծիքով, մեծ քանակի բնակավայրերում ծրագրի շահառուները տեղյակ չեն, որ կարող են ստանալ ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն, կամ այն նրանց համար հասանելի չէ խորհրդատուի հեռու լինելու կամ մոտակա բնակավայրում գրասենյակի բացակայության պատճառով:

ՄԻԱՎ հետազոտություն

Բոլոր մասնակիցները ցանկություն են հայտնել, որ ՄԻԱՎ հետազոտությունը շատ կարևոր է և պետք լինի շարունակական:

Երևան

Փոխել

Բոլոր մասնակիցների կարծիքով պետք է ավելացվեն թեստավորման եղանակները, որպեսզի իրենք ընտրեն, թե ինչ եղանակով են ուզում հետազոտություն անցնել: Պետք է ավելանան հետազոտության վայրերը, որպեսզի ճանապարհի հեռավորությունը խոչընդոտ չհանդիսանա: Ինչպես նաև պետք է ծառայությունը մատուցվի ոչ միայն բուժհաստատությունում, այլև ՀԿ-ի գրասենյակում, ինչը կավելացնի ստուգվել ցանկացողների քանակը, և չի լինի ժամային անհամապատասխանության խնդիր:

Մարզեր

Փոխել

Բոլոր մասնակիցները ցանկություն են հայտնել ունենալ թեստավորման եղանակի այլընտրանք: Այն մարզերում, որտեղ ծրագիր է իրականացվում, բարձրաձայնվել է տրանսպորտի և հետազոտության վայրի հեռավորության խնդիրը: Իսկ այն մարզերում, որտեղ ծրագիր չի իրականացվում, հնարավորության դեպքում թեկուզ տարին մեկ անգամ անցկացնել թքի թեստերի միջոցով հետազոտություն:

ԿՏ կյուբերի և գիտելիքների տրամադրում

Երևան / Մարզեր

Շարունակել

Բոլոր մասնակիցները նշել են, որ շատ կարոր է գիտելիքների տրամադրումը ինչպես աուդիթի աշխատողների միջոցով, այնպես էլ ԿՏ կյուբերի միջոցով:

Փոխել

27 շահառու դժգոհություններ են հայտնել, որ բուկլետների նյութերը չեն թարմացվում: Գրված են լինում բարդ և շատ գրական լեզվով ու շատերի համար մատչելի չեն: 15 շահառու առաջարկել են, որ ԿՏ նյութերում ներառեն իրական դեպքերի նկարագրություն, ինչն ավելի հետաքրքիր կդարձնի դրանք: 15 մասնակից ցանկացել են, որ գիտելիքներ տրամադրվեն տարբեր եղանակով` ֆիլմեր, հոլովակներ, հաղորդումներ և այլն: Քանի որ ինֆորմացիայի զգալի մասը ստանում են աուդիոյ աշխատողից կար դժգոհություն, որ մեկ աուդիոյ աշխատողը շատ քիչ է այդ քանակի շահառուների հետ արդյունավետ աշխատելու համար:

Պահպանակների տրամադրում

Երևան / Մարզեր

Շարունակել

Այս ծառայության տրամադրումը ողջունելի էր բոլոր մասնակիցների կողմից
Փոխել

Ընդհանուր առմամբ բոլորը գոհ էին այս ծառայության որակից: Մասնակիցներից 55-ը կարծիք հայտնեցին, որ տրամադրվող պահպանակները լինեին ավելի որակյալ, 12-ը` ունենային չափսերի ընտրության հնարավորություն, ինչպես նաև 12 մասնակից ցանկություն հայտնեցին, որ տրամադրվեն կանացի պահպանակներ: Մարզերի մասնակիցները հայտնեցին, որ ճիշտ կլիներ ունենալ փոքրիկ գրասենյակ, որտեղից իրենք կկարողանային վերցնել այդ պահպանակները իրենց ցանկացած ժամանակ, և պահպանակները տրամադրվեն ըստ պահանջի: Քանի որ Գեղարքունիքի մարզում ծրագիր չի իրականացվում, այնտեղի մասնակիցներն ասացին, որ ժամանակ առ ժամանակ որոշակի քանակությամբ իրենց էլ տրամադրվի:

Սեռավարակների հետազոտություն և բուժում

Երևան / Մարզեր

Շարունակել

Քննարկման մասնակիցների գրեթե 100 տոկոսը կողմ էր, որ այս ծառայությունը շարունակվի:

Փոխել

Բոլոր խմբերում կար կարծիք, որ պետք է ընդլայնվի հիվանդությունների հետազոտման և բուժման ցանկը:

Ծառայությունների կրճատում 50%-ով

ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն՝ Ընդհանուր մասնակիցների մեծամասնությունը կարևորում է այս ծառայությունը, բժշկի առկայությունը ու նախաթեստային և հետթեստային խորհրդատվությունը, սակայն կարծում է, որ այդ խորհրդատվությունը կարող է ստանալ հետազոտության ուղեգրողից՝ աութօրիչ աշխատողից կամ ՅԿ-ի գրասենյակում: Այս ծառայությանը կողմ են քվեարկել 59 մասնակից:

ՄԻԱՎ հետազոտություն՝ Մասնակիցների կարծիքով այս ծառայությունը ծրագրի ամենակարևոր ծառայություններից մեկն է, և պետք է շարունակել: Այս ծառայությանը կողմ են քվեարկել 122 մասնակից:

ԿՏ նյութերի տրամադրում՝ Մեծամասնության կարծիքով բյուջեի կրճատման դեպքում ավելի լավ է կրճատել բուկլետների տպագրությունը և տրամադրումը, քանի որ մտածում են՝ ցանկացողները կարող են համացանցի կամ աութօրիչ աշխատողի միջոցով տեղեկություն ստանալ: Այս ծառայությանը կողմ են քվեարկել 35 մասնակից:

Պահպանակների տրամադրում՝ Մասնակիցների կարծիքով այս ծառայությունը պետք է շարունակվի, որովհետև շահառուների զգալի մասն ի վիճակի չի լինի գնել, ինչը կբերի ռիսկային վարքագծի ցուցաբերմանը: Շահառուների մեծամասնության կարծիքով այս ծառայությունը պետք է շարունակել: Այս ծառայության կողմ են քվեարկել 102 մասնակից:

Սեռավարակների հետազոտություն՝ Բոլոր մասնակիցները միաձայն քվեարկեցին, որ այս ծառայությունը շարունակվի: Ներկայումս հետազոտությունների ոչ մատչելի լինելը կբերի նրան, որ մեծամասամբ շահառուները չեն հետազոտվի: Բոլոր մասնակիցների կարծիքով այս ծառայությունը պետք է շարունակել: Այս ծառայությանը կողմ են քվեարկել 106 մասնակից:

Սեռավարակների բուժում՝ Այս ծառայության համար ևս բոլոր մասնակիցները միաձայն քվեարկեցին: Նշեցի նաև, որ անգամ եթե անվճար հետազոտվեն, դժվար թե ի վիճակի լինեն գումար հատկացնել բուժման համար, իսկ ծայրահեղ դեպքում ստիպված պիտի զբաղվեն ինքնաբուժմամբ: Բոլոր մասնակիցների կարծիքով այս ծառայությունը պետք է շարունակել: Այս ծառայությանը կողմ են քվեարկել 96 մասնակից:

Ծառայությունների կրճատում 75%-ով

Ընտրված 4 ծառայություններից շահառուները ընտրեցին ընդամենը երկու ամենակարևոր ծառայությունները. 102 շահառու ընտրեց ՄԻԱՎ հետազոտությունը՝ գիտակցելով այս ծառայության կարևորությունը, և 72 շահառու ընտրեց Սեռավարակների հետազոտությունը՝ հույս հայտնելով, որ հետազոտությունը առանց բուժման չի լինի:

Ծառայություններ	50%	75%
ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն		
ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտություն	+	+
Կ.Տ նյութերի և գիտելիքների տրամադրում		
Պահպանակների տրամադրում	+	
Սեռավարակների հետազոտություն	+	+
Սեռավարակների բուժում	+	

Բացի այդ աղյուսակում բերված պատասխաններից ծրագրի իրականացման ընթացքում շահառուներից ստացվել են նաև հետևյալ առաջարկները՝

1. Տրամադրել հիգիենայի պարագաներ,
2. Ունենալ խրախուսման եղանակներ ՄԻԱՎ-ի և սեռավարակների նկատմամբ պարբերաբար հետազոտվող շահառուների համար:

Ծրագրի իրականացման գործընթացը բացահայտեց շահառուների բարձր ակտիվությունը և պատրաստակամությունը ազգային ծրագրում իրենց ձայնը լսելի դարձնելու և ծրագրային խնդիրները բացահայտելու գործում: Գրեթե յուրաքանչյուր ծառայության համար ստացվեցին նկատառումներ որակի և հասանելիության բարձրացման նպատակով: Ստեղծվեցին նոր կապեր Գյումրիի գործընկեր ՅԿ-ի հետ, լսվեց այն ԿՍԿ-ների կարծիքը, որոնք բնակվում են ազգային ծրագրի ծածկույթից դուրս մնացած շրջաններում: Մարզերում բոլոր շահառուները նշեցին գրասենյակի բացակայության խնդիրը: Մեծ է նաև տրանսպորտի և տեղափոխման խնդիրը ինչպես շրջաններում, այնպես էլ Երևան քաղաքում: